

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական
խորհրդի 26/03/2020թ. թիվ
141 նիստում
Ա. ՍԱՐԳՍՅԱՆ



ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

**ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՒՆՈՒԹՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ-ԳՆԱՀԱՏՄԱՆ**

(Նոր խմբագրությամբ)

Երևան 2020

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Գործատուների կողմից տվյալ կրթական ծրագրի շրջանավարտների վերաբերյալ գոհունակության հարցում-գնահատման (այսուհետ՝ գործատուների հարցում) կանոնակարգը սահմանում է ԳԿՄԿ-ում մագիստրատուրայի շրջանավարտների ստացած կրթության արդյունավետության և կրթական ծառայությունների որակի վերաբերյալ գնահատման կարգը:

1.2. Գործատուների հարցումը ԳԿՄԿ որակի ապահովման ներքին համակարգի կարևորագույն բաղադրիչներից է:

1.3. Գործատուների հարցման կանոնակարգը սահմանում, հաստատում, կարգում փոփոխություններ և լրացումներ է կատարում ԳԿՄԿ կրթության որակի ապահովման բաժինը:

2. Գործատուների հարցման անցկացումը

2.1. Գործատուների հարցումն իրականացվում է ըստ անհրաժեշտության:

2.2. Գործատուների հարցումը կազմակերպվում է ԳԿՄԿ կրթության որակի ապահովման բաժնի կողմից:

2.3. Գործատուների հարցումն անցկացվում է սույն կանոնակարգին կից գնահատման հարցաթերթով (Հավելված 1), որում գործատուն նշում է այն պատասխանը, որն առավել ճշգրիտ է արտացոլում իր կարծիքը:

2.4. Գործատուների հարցումը հրապարակային է: Գործատուները նշում են իրենց անուն, ազգանունը, ինչպես նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության:

2.5. Գործատուները հարցման ընթացքում կարող են ներկայացնել առաջարկություններ և դիտողություններ, որը հետագայում հիմք է հանդիսանում ուսումնական պլանը մշակելիս:

2.6. Գործատուների հարցումն անցկացվում է էլեկտրոնային տարբերակով:

3. Գործատուների հարցման արդյունքների մշակումը և պահպանումը

3.1. Գործատուների հարցման արդյունքները մշակում է ԳԿՄԿ կրթության որակի ապահովման բաժինը:

3.2. Գործատուների հարցման արդյունքները 5 տարի, իսկ գնահատված հարցաթերթերը 3 տարի պահպանվում են ԳԿՄԿ էլեկտրոնային բազայում:

4. Գործատուների հարցման արդյունքների օգտագործումը

4.1. Գործատուների հարցման արդյունքները քննարկվում են ամբիոններում, անհրաժեշտության դեպքում նաև այլ ստորաբաժանումներում:

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

**Գործատուների կողմից կրթական ծրագրի շրջանավարտներից
գոհունակության գնահատման հարցաշար**

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնը (այսուհետ՝ ԳԿՄԿ) շարունակաբար ձգտում է վերանայել և բարելավել դասավանդման և ուսումնառության որակը: Տվյալ հարցման նպատակն է ԳԿՄԿ-ի պրոֆեսորադասախոսական կազմին հնարավորություն ընձեռել կրթական ծրագիրը վերանայելիս հաշվի առնել գործատուների կարծիքները: Հարցաշարը լրացնելը Ձեզնից երկար ժամանակ չի խլի, բայց մեծապես կօգնի մեզ: Հարցման տվյալները ներկայացվելու են ընդհանրացված տեսքով՝ պահպանելով հարցման մասնակիցների անանունության սկզբունքը:

Շրջանավարտի կրթական ծրագրի (մասնագիտության/մասնագիտացման) անվանումը	
Ո՞ր տարվա շրջանավարտներն են դիտարկված	
Որակավորման աստիճանը	
Ձեր կազմակերպությունում աշխատող ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տվյալ կրթական ծրագրի շրջանավարտների թիվը	
Կազմակերպության անվանումը	

- Որքա՞ն ժամանակ է պահանջվում մեր շրջանավարտից Ձեր աշխատանքային պահանջներին համապատասխան գործունեություն ծավալելու համար.
 - Պատրաստ են առաջին օրվանից
 - 1-3 ամիս
 - 3-6 ամիս
 - Մինչև 1 տարի
 - 1 Տարուց ավել
 - Դժվարանում եմ պատասխանել
- Ինչպե՞ս կգնահատեք շրջանավարտների մասնագիտական պատրաստվածության աստիճանը.
 1. Անբավարար
 2. Բավարար
 3. Միջին
 4. Բարձր
- Ինչպե՞ս կգնահատեք շրջանավարտների տեսական գիտելիքները.
 1. Անբավարար
 2. Բավարար
 3. Միջին
 4. Բարձր

4. Ինչպե՞ս կգնահատեք շրջանավարտների գործնական գիտելիքները.

- 1.Անբավարար
2. Բավարար
3. Միջին
4. Բարձր

5. Ձեր կարծիքով՝ մեր շրջանավարտների գիտելիքներն առավելապես տեսական, թե՞ գործնական են.

- Առավելապես տեսական են
- Առավելապես գործնական են
- Հավասար են
- Երկուսն էլ բացակայում են

6. Ինչպե՞ս կգնահատեք շրջանավարտների կարողությունները և հմտությունները.

- 1.Անբավարար
2. Բավարար
3. Միջին
4. Բարձր

7. Որքանո՞վ են մեր շրջանավարտները մասնագիտական գործընթացին ցուցաբերում ստեղծագործական մոտեցում.

- 1.Անբավարար
2. Բավարար
3. Միջին
4. Բարձր

8. Ինչպե՞ս կգնահատեք շրջանավարտների թիմային աշխատանք կատարելու ունակությունները.

- 1.Անբավարար
2. Բավարար
3. Միջին
4. Բարձր

9. Ինչպե՞ս կգնահատեք շրջանավարտների տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման կարողությունները.

- 1.Անբավարար
2. Բավարար
3. Միջին
4. Բարձր

10. Ինչպե՞ս կգնահատեք շրջանավարտների մասնագիտական օտար լեզուների իմացությունը.

- 1.Անբավարար
2. Բավարար
3. Միջին
4. Բարձր

11. Նշեք շրջանավարտների 3 հիմնական առավելությունները.

1.	
2.	
3.	

12. Նշեք շրջանավարտների 3 ամենամեծ թերությունները.

1.	
2.	
3.	

13. Կցանկանայիք արդյո՞ք տվյալ կրթական ծրագրի այլ շրջանավարտ ունենալ Ձեր աշխատակազմում.

- Այո
- Ոչ
- Դժվարանում եմ պատասխանել

14. Ի՞նչ փոփոխություններ կառաջարկեիք կատարել տվյալ կրթական ծրագրում մասնագիտական պատրաստվածության բարձրացման նպատակով.

15. Լրացուցիչն մեկնաբանություններ

Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար: